միւսանգամ մուծանել անդ զօրս, զի պատճառ եղեն աւերման տեղւոյն եւ ցրուելոյ ժողովրդոց, (1826 · 'ի 21 Յուլիսի)։

Տեսեալ երից Եպիսկոպոսաց թէ անպատասխանի մնացին նամականիք իւրեանց յԱզգապետաց և 'ի Պատրիարքաց, և ինքեանք տագնապէին 'ի տանջանս և 'ի նեղութիւնս յերեսաց պարտատերաց և պահանջողաց, առաքեցին 'ի Կոստանդինուպոլիս զԽորհրդական գրագիր Յակոբ վարդապետ՝ ծանուցանել զայսոսիկ, և միաբանք երկպառակեալ ոչ մերձենային առ նոսա, թէպէտեւ հրաւիրէին զնոսա 'ի խորհուրդ։

Իսկ վանք Ս · Յակոբայ տատանէր 'ի միջի խառնութեանց իրրեւ նաւ վարեալ 'ի մրրկէ, և այն յաւէտ յանմիաբանութենէ և յերկպառակութենէ գլխաւորաց · գլուխ չարեաց և վրդովիչ ամենեցուն ցուցանեն զոլ Եղիա եպիսկոպոս՝ որ փոխանորդն էր։ Այլ իրրեւ հասին գրեանք այլազգեաց և միաբանաց 'ի Կոստանդինուպոլիս, որպէս գրեցաք, և ընթերցեալ ծանեան զմիտս նոցա, կոչեաց առ ինքն Գաբրիէլ Պատրիարք զոմանս յայլազգեաց Երուսաղէմի որք էին անդ, եւ պատուիրեաց նոցա գրել յԵրուսաղէմ առ մեծամեծս՝ թէ ինքն հաստատեալ է 'ի Պատրիարքութեան Երուսաղէմի և զեղիա հանեալ 'ի պաշտօնէ փոխանորդութեան, և 'ի մօտոյ ունի կարգել զայլ ոք 'ի տեղի նորա։ Երեքին Խորհրդականքն առաքեցին 'ի Կոստանդինուպոլիս 18,000 դահեկան պարտս փոխանակագրով հատուցանել անդ, իսկ Գաբրիէլ Պատրիարք դարձոյց զնա յետս, և գրեաց առ Խորհրդականս, թէ ներքին եւ արտաքին գործք Աթոռոյն և Փոխանորդութիւն Կոստանդինուպոլսոյ ինձ յանձն է, եւ պատուիրէ նոցա զի եթէ յաւելցին առաքել զփոխանակագիրս՝ դարձուցանէ յետս, որպէս եւ արարն։ Իրրեւ հասին գրեանքն յԵրուսաղէմ, ժողովեցան պարտատերք 'ի վերայ Խորհրդականաց և նախատակոծ բանիւք այպանէին և հայհոյէին ըզնոսա, որպէս է տեսանել 'ի բազմաթիւ նամականիս նոցին, զոր գրեցին 'ի Կոստանդինուպոլիս, և պահանջէին զկրկնապատիկս դրամոց սակս յետս դարձուցանելոյ ըզմուրհակսն · և ոմանք 'ի պարտատերաց տարեալ մատու-